

անիշխանականաց սոսկալի ոճիւ մը ըս-
լոր աշխարհքը սարսափեցուց Եւ ընդ-
հանուր զայրոյթը գրգռեց: Լիւն քաղաքն
արուեստասնդէս մը բացուած ըլլալով
Գառնոյ Դաղդիայի հասարակապետու-
թեան զահերեցն ամսոյս 23ին հոն գնաց
զայն աշքէ անցընելու: Հոն միծ ցնծու-
թեամբ ընդունուեցաւ եւ 24 ին իրիկունը
քաղքին կողմանէ իրեն տրուած փառաւոր
ծաշէն ետքը կառքը մտաւ թէատրոն
երթալու համար, ուր իր պատուոյն համար
հանդիսական ներկայացում՝ պիտ'որ
ըլլար: Դեռ պալատին առջեւն եղած
ատեն՝ 22 տարւան երիտասարդ մը
ծեղքն աղեքսագիր մը կռորին մտեցաւ,
վրան ելաւ եւ զահերեցուն փորը դաշոյն
մը խոթեց: Ամիջապէս զանի քաղաքա-
պետին տունը տարին, բոլոր երեւելի
բժիշկները վազեցին եւ կարելի դար-
մաններն րրին, սակայն երեցուկէս ժամէ
ետքն կէս գիշերը երեք քառորդ անցած
հոգին աւանդեց: Բոլոր Գաղղիա եւ մա-
նաւանդ Լիւն այս տխուր լուրին վրայ
խորին սգոյ մէջ ընկնուեցաւ: Հարագործը
Քազբերիս Ճովաննի Սանթո անունով Ի-
տալացի մը, իսկոյն ձեռքակալուեցաւ եւ
ժողովուրդը զանի պատառ պատառ
պիտ'որ ընէր եթէ ոստիկանութիւնը վրան
չհասնէր եւ ձիաւոր պահանջողաց օգնու-
թեամբը կատարած ժողովրդեան մէջէն
մեծ դժուարութեամբ բանտ չտանէր:
Սատի Գառնոյ 1837ին Օգոստ. 11ին
ծնած Մեծ յեղափոխութեան յաղթու-
թիւնները ծրագրող եւ կարագործը Գառ-
նոյին թողն էր: Իւր անխնշ գործունէու-
թեամբն, հանձարովն եւ ուղղամտու-
թեամբն հասարակապետութեան մտա-
դրութիւնն իրեն գրաւեց, զանազան
պաշտօններէն անցնելէն ետեւ Կրէվիին
զահերեցութեան ատեն ելեւմտից պաշ-
տօնեայ եղած էր, եւ երբ Կրէվի ինկաւ՝
1887ին Դեկտ. 3ին 616 քուէով (833
քուէներու մէջէն) անոր յաջորդ ընտրուե-
ցաւ եւ եօթը տարի անստգիւտ կառա-
պարութիւն մը վարեց: Առաջիկայ Դեկ-
տեմբերին իւր իշխանութեան ժամանակը
լրանար պիտի եւ խօսք կար նորէն ըն-
տրուելու, սակայն ինք ծանուցած կ'ըլլայ,
ոմանց թէ այս երկրորդ ընտրութիւնն
յանձն պիտի չառնուի:

Ամսոյս 27ին կէսօրէն ետքը՝ ծերա-
կուտի եւ խորհրդանոցի անդամները
վերսայը ժողովեցան Հասարակապետու-
թեան նոր գծերիցու ընտրութիւնը կա-
տարելու համար: Առաջին քուէարկու-
թեան մէջ Քազբիւր Փէրիէ 845 քուէի
մէջէն 451, քուէ ընդունեցաւ եւ ժողովա-
կաններէն ու հանդիսատեսներէն ցնծալից
ծափահարութեամբ Գաղղիական Հասա-
րակապետութեան Գահերեց ողջունեցաւ,
միայն ընկերավարական յեղափոխա-
կանները գոհ չեղան: Ժամ Փօլ Քազբիւր
Փէրիէ Լուի Փիլիքին համբաւաւոր պաշ-
տօնէն թողը՝ 1847ին Նոյ. 8ին ծնած է,
եւ 20 տարիէ վեր խորհրդանոցի անդամ
էր: 1890ին խորհրդանոցին երկրորդ
զահերեցն եղաւ, անցած տարի Փլուէին
առաջին զահերեցուն անկմանէն ետքն
ինքն անոր տեղն անցաւ: Նոյն տարին
Նոյեմբերին մէջ ակամայ պաշտօնէից
զահերեցութիւնն ընդունեցաւ, որմէ ան-
ցած ամիս հրաժարեցաւ: Գաղղիայի
այժմեան ամենամեծ քաղաքաւէտն է
չափաւորական հասարակապետական-
ներէն, լի մտնութեամբ եւ գօրաւոր կամ-
քով, որով կը յուսացուի, թէ անիշխանա-
կաններն իրենց չափու մէջ պիտի կարե-
նայ բռնել: Կ'ըսուի թէ Պիւրտոյի պիտի
յանձնուի որ նոր դաշինք մը կազմէ:



ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄԱՆԳՆԵՐ

ՄԱՏՆԵԱՐԱՄԱՆ — Փեթթէր եւ հին Հայոց ազ-
գայն երգերը. 197: — Զենոք Գալակ նոր օրի-
նակ մը. 200: — Սեկունդու իմաստասէր. 203:
ԼԵՋԻԵՐՈՒՆԵՄԱՆ — Հայկական յարուկ անուանք.
208

ՊԱՏԱՐԱՄԱՆ — Գալկասի կաթողիկէայ Հայերը. 211:
— Հուսեպարայոց մայրաքաղաքն (Եփրա հայա-
քաղաքն) ի գիր եւ ի պատկերս. 216:
ԿՆՍՍԱՐԱՄԱՆ — Անդրէաս բժիշկ Փոփովիչ. 218:

ՍԵԼԵԽՍԵԼ

Աշխարհիս կործանումը. 225:
ԿՐՕՆԱՄԱՆ — Լեւոն ԺԳ քահանայապետին նոր
ընթացքերը. 226:

ՔԱՂԱՔՈՒՄԱՆ ՏԵՍԻՍԻՔԻՆ. 226:



ՀՐԱՍԱՆԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՑՈՒ ԽՐԱՄԱԿՐ

Վ. ԲԵՓԱՅԵԼ Վ. ՊԱՐՈՆՅ

ՎԻՆՆԵԱ. ՄԻԻԲՐԵԲԱՆ. ՏԳԵՐԱՆ